

Լ. Բ. ԱՂԱՅԱՆ, Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1976, 1615 էջ:

Արդի հայերենի լիակատար բառացանկը դժվար է կազմել, որովհետև օրեօր նոր բառեր են աճելուում և եղածներից շատերը գործածությունից դուրս գալիս: Ահա թե ինչու Մայիսյանի «Հայերենի բացատրական բառարանը» (ՀԲԲ) որքան էլ իր ժամանակի համար (1944—1945) լավագույնն էր, այսօր լիովին չի բավարարում ընթերցող հասարակությանը՝ թե՛ մեծաքանակ բառերի հնացած լինելու, գործածությունից դուրս գալու և թե՛ զգալի քանակով նորաստեղծ, նորամուտ բառեր չընդգրկելու պատճառով: Ուստի, վաղուց կարիք էր զգացվում արդի հայերենի բացատրական նոր բառարանի: Այդ պահասը մասամբ լրացրեց ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի սնված լեզվի ինստիտուտի կազմած «Ժամանակակից հայերենի բացատրական բառարանը» (ԺՀԲԲ): Այս առումով ուրախալի է Հայկական ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, պրոֆ. Լ. Բ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի» լույս ընծայումը, որն իր ընդգրկմամբ՝ բառահոգվածների քանակով և բառերի մշակումով շատ ավելի ընդարձակ է ու բազմակողմանի, քան նախորդ բացատրական բառարանները:

Բառարանն ունի ընդարձակ առաջաբան, ուր հեղինակը հատուկ քննության է ենթարկում արդի հայերեն բառազանձը՝ «Արդի հայերենի բառապաշարի ընդհանուր տեսություն» խորագրի տակ: Դա արդի հայերենի (արևմտահայ և արևելահայ) բառապաշարի գիտական յուրովի դասակարգում է, որ մեծ արժեք է ներկայացնում հայագիտության համար:

Բառարանը կազմված է առաջաբանում շարադրված գիտական սկզբունքներին համապատասխան, այդ պատճառով էլ հարկ ենք համարում մանրամասնորեն անդրադառնալ դրանց:

Պրոֆ. Լ. Բ. Աղայանը միանգամայն իրավացիորեն տարբերակում է առդի հայերեն և ժամանակակից հայերեն անվանումները. առաջինով նա կոչում է ժամանակակից արևելահայերենն ու արևմտահայերենը միասին, իսկ երկրորդով՝ ժամանակակից գրական արևելահայերենը: Ընդունելով այս տարբերակումը, կարծում ենք ավելի նպատակահարմար կլինի առանձին-առանձին անվանել արևմտահայ գրական լեզու, արևելահայ գրական լեզու՝ առանց ժամանակակից տերմինի, որովհետև եթե գրում ենք ժամանակակից, պիտի հասկանանք այսօրվա հայերենը ավելի նեղ, համաժամանակյա կտրվածքով:

Հիշյալ տեսություն մեջ ըստ էության առաջին անգամ անհրաժեշտ խորությամբ ներկայացվում է արդի հայերենի (արևմտահայերեն և արևելահայերեն) բառապաշարի գիտական լիակատար դասակարգումը՝ նրանում արտահայտելով մեր բառապաշարի մեջ կատարված բոլոր տեսակի տեղաշարժերը (հնաբանություն, նորաբանություն, գործառական տարատեսակներ, զուգահեռ ձևեր և այլն): Այդ դասակարգման հիմքում ընկած են հեղինակի հետևյալ սկզբունքները, որոնք գերծնական կիրառություն են ստացել բառարանում: Արարատյան ժողովրդա-խոսակցական լեզվի հիմքի վրա զարգացավ ու գրականացավ ժամանակակից արևելահայերենը, իսկ արևմտահայ ժողովրդա-խոսակցական լեզվի հիմքի վրա՝ արևմտահայերենը: Այդ երկու լեզուների (արդի հայերենի) բառապաշարը ձևավորվել է պատմականորեն որպես նոր համակարգ, որի հիմքում, սակայն, գրաբարի բառազանձն էլ, որ անցել է նոր լեզվին գրականության միջոցով: Ժողովրդա-խոսակցական լեզվի բառապաշարը խճողված է օտար (արևելյան և եվրոպական լեզուների) բառերով, և նույնիսկ այն գրագետները, որոնք գտնում էին, որ ժողովրդա-խոսակցական լեզուն պիտի բարձրացնել գրական լեզվի մակարդակին, պահանջում էին մաքրել նրա բառապաշարը օտար բառերից և նրանց փոխարենն օգտագործում էին գրաբարյան բառաձևերը: Այսպիսով աշխարհաբարը աստիճանաբար զտվում է, համարվում գրաբարյան բառերով: Այս հարցում մեծ է Մխիթարյանների երախտիքը: Պրոֆ. Աղայանը այս երևույթի համար երկու պատճառ է նշում: Առաջինը գրական ժառանգորդությունն էր: Գրագետ խավը, մտավորականությունը օգտվում էր գրաբար լեզվով գրականությունից, որի բառապաշարը նա յուրացրել

էր, գիտեր և ձգտում էր օգտագործել: Երկրորդ պատճառն այն է, որ ժողովրդա-խոսակցական լեզվում հիմնահայերենյան բառերը ենթարկվել էին գանաղան հնչյունափոխությունների, իսկ գրականության մեջ գործածված գրաբարյան բառերը անփոփոխ էին և դրանով էլ մի տեսակ ընդհանուր այդ խոսակցական լեզուների համար. սա օգնում էր, որ այդ գրաբարյան բառերը մտնեն նոր լեզու: Շատ բառեր էլ հենց խոսակցականում պահպանվել էին անփոփոխ ձևով (հող, վարել, սեսել, խոսել) կամ պահպանվել էին ընդհանուր պատմական հնչյունափոխությամբ (բարցր, մարթ):

Հետևաբար, նոր գրական հայերենի բառապաշարի հարստացման առաջին գործոնը գրական մտանգորգությունն էր, իսկ մյուս կարևոր գործոնը եղավ գրաբարյան բառակազմական համակարգը, գրաբարյան բառակազմական կաղապարները գրաբարյան բառամթերքով: Ոչ միայն օտար բառերը փոխարինվեցին հայերենով (նալքանդ-պայտար, շոբան-հովիվ, դամրի-երկաթագործ, թամբաքու-ծխախոտ և այլն), այլև բուն հայերեն, բայց ժողովրդա-խոսակցական շատ ձևեր փոխարինվեցին գրաբարյան ձևերով (աչքի բժիշկ-ակնաբույժ, պատշար-որմնադիր, դատարկ ձեռքով-ձեռնունայն և այլն): Սակայն գրական գործող լեզվի բառապաշարը քարանալ չի կարող, արտալեզվական և ներլեզվական գործոնների ազդեցությունների ներքո այն անընդհատ փոփոխվում է, բառապաշարում առաջանում են գանաղան շերտեր: Աղայանը առանձնացնում է բառապաշարի հետևյալ շերտերը՝ 1) Համաճայլական բառեր, որոնք եղել են գրաբարում, միջին հայերենում և կան արդի հայերենում ու բարբառների մեծ մասում, օրինակ՝ ջուր, հաց, ցորեն, մարդ, խոսել, սեսել, տուն, եղբայր և այլն: 2) Համագրական, որոնք արդի հայերենին (արևմտահայ, արևելահայ) են անցել գրական ժառանգությամբ, օրինակ՝ ծաղկավառ, գարնանագեղ, վարդապետ, քերական և այլն: 3) Նոր գրական, այն նորակերտ բառերն են, որ ընդհանուր են արևմտահայերենին և արևելահայերենին. օրինակ, սավառնակ, հածանավ, կոթող և այլն: 4) Մասնավոր գրական, որոնք հատուկ են միայն կամ արևելահայերենին, կամ արևմտահայերենին, որով ստացվում են ղուգահեռ ձևվեր. օրինակ՝ օրագիր-հայտագիր, նոր տարի-Ամանոր, հեռախոս-հեռաձայն և այլն: 5) Հին (գրաբարյան) բառեր, որոնք գործածվել են միայն գրաբարում և չեն անցել աշխարհաբարին, բայց գրականության մեջ գործածվել են ոճական և այլ նպատակներով. օրինակ՝ կորուսիչ, կորովածիգ, կուրզկուրայն և այլն: 6) Աշխարհաբարյան բառեր, որոնք գրաբարում չեն եղել և աշխարհաբարին են անցել ժողովրդա-խոսակցական լեզվից, օրինակ՝ մատղաշ, ճգնել, մաճկալ և այլն: 7) Բարբառային բառեր, որոնք այս կամ այն բարբառից գրականին են անցել: օրինակ՝ շմուշկ, դահուկ, գետնանուշ, տհալ և այլն:

Այս շերտերը, սակայն, անջրպետված չեն և, կապված լինելով միմյանց հետ, կազմում են մի ամբողջություն: Գրական լեզվի բառապաշարը շարունակվում է համալրվել գրաբարից, բարբառներից, օտար լեզուներից, որի ընթացքում ստեղծվում են բառային ղուգահեռություններ, տարբերակներ: Այս տեսակետից բառապաշարը պրոֆ. Աղայանը բաժանում է երկու կարգի՝ 1) միջուկային բառակազմ, որի մեջ մտնում են այն բառերը, որոնք ընդհանուր են սոցիալական, տարածքային, գործառնական ոլորտներին, ինչպես՝ հաց, սեսել, գնալ, երկինք, սեր, ձեռք և այլն, 2) Թարբերակային բառակազմ, որի մեջ մտնում են սոցիալական, գործառնական, պատմական, ներլեզվական ղուգահեռ բառաձևերը:

Սոցիալական տարբերակներն են՝ դրականի նկատմամբ ժողովրդա-խոսակցական բառերը, բարբառային, ծածկալեզվային-ժառգոնային բառերը, հասարակաբանությունը, ղուգահեռաբանությունը, արևմտահայերեն-արևելահայերեն ղուգահեռ բառերը:

Գործառնական տարբերակներն են՝ գիտա-քաղաքական տերմինները, գրասենյակային-պաշտոնական, ստեղծագործական տերմինները:

Պատմական տարբերակներն են՝ գեղարվեստական գրականության մեջ ոճական նպատակներով գործածված գրաբարյան և միջին հայերեն բառերը՝ հնաբանությունները և նորաբանությունները. երբ այս բոլորն օգտագործվում են արդի գրական հայերենի բառերին ղուգահեռաց:

Մեր լեզվի ներքին (հնչյունային, բառակազմական) օրինաչափությունների հիմամբ բառապաշարում ստեղծվել են նաև ներլեզվական տարբերակներ, որոնք պրոֆ. էդ. Աղայանը ներկայացնում է ութ ենթախմբով. 1) Փոխառաբանական համաճյուղներ՝ արժանահարգ-հարգարժան, հերթաձև-արձակահերթ, մայրաքաղաք-քաղաքամայր և այլն: 2) Տարբերակ համաճյուղներ՝ արևախաչ-արևախանձ, արտասովխեղդ-արցունքախեղդ: 3) Հոլովապային Թարբերակներ՝ շարլեզու-շարլեզու, գինեվետ-գինեվետ, դոզդոզ-դոզազոզ: 4) Հնչյունափոխական Թարբերակներ՝ չիկահեր-չեկահեր, ձնաբեր-ձյունաբեր: 5) Հավելագրական բարդություններ՝ հեղեղ-զրհեղեղ. կիրճ-լեռնակիրճ: 6) Կեղծ գրական բառեր՝ ժողովրդական ստուգաբանությամբ առաջացած՝ հավա-

տամբ-հավատանք, նաև՝ տատմեր-տատմայր, աստեղաբիր-աստղաբիր, վեշտասնամյա-վեցտասնամյա, 7) Ձևարանակալե տարբերակներ՝ սնուցանել-սնուցել, սոքա-սրանք, ծաղկիլ-ծաղկել: 8) Նուարանակալե բազմազանություն՝ երբ օտար մի բառի դիմաց հայերեն մի քանի բառ է ստեղծվում՝ սրտաբանություն-սրտագիտություն (кардиология), ոճագիտություն-ոճաբանություն (стилистика) և այլն: Այս բոլոր դասդասումները կատարված են՝ հիմք ընդունելով լեզվի բառապաշարի արդի վիճակը:

Արդի բառապաշարի պրոֆ. Աղայանի կատարած դասակարգման այս համառոտ վերաշարադրանքը ցույց է տալիս, թե որքան մանրակրկիտ և գիտական պահանջկոտություն է կատարված: Բառապաշարի ուսումնասիրությունը և որքան արժեքավոր է մեր բառապաշարի այս նորովի քննությունը:

Գրախոսվող բառարանն ընդգրկում է 135600 բառ և 11000 դարձվածաբանական միավոր: Իր ծավալով այն շատ ավելի մեծ է, քան ՀՔԲ-ը և նույնիսկ ժՀՔԲ-ը: ՀՀՔԲ-ի 57300 գրաբարյան հնացած և բարբառային բառեր դուրս են մնացել նոր բառարանից, դրանց փոխարեն 74100 նոր բառեր են ավելացել, որոնք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով չկան նախորդում: Շատ են նաև դարձվածաբանական միավորները: Աղայանի բառարանը 12000 բառահոգով ավելի է ժՀՔԲ-ից: Վերջինիս բառացանկում չկան, օրինակ, ապառքավոր (ֆինանսական և իրավաբանական տերմին է, որ նշանակում է ոչ շարքային-нестроевой), բյուրաբերդ, բյուրաշուրթ, անդամատետր, ապառառում (սարքավորումը քանդելը, տեղից հանելը, ապամոնտաժումը) և այլն: Հետաքրքիր է, որ ապավիժիլ բառը այդ բառարանում չկա, բայց ապատիտ բառի բացատրության մեջ օգտագործված է՝ «ապավիժված շատ հանքատեսակների բաղկացուցիչ մասը»:

Քսան տարի աշխատելով բառարանի վրա՝ պրոֆ. էդ. Աղայանը ձգտել է խուսափել բացթողումներից և ստեղծել հնարավորության սահմաններում լիակատար բառացանկ:

Միայն բառահոգվածների շատությունը չի որոշվում նոր բառարանի առավելությունը, կարևոր է նաև այն, թե բառն ինչպես է ներկայացվում, ինչ մշակման է ենթարկվում: Այս տեսակետից ես սույն բառարանը զգալի առավելություն ունի: Պրոֆ. Աղայանի սեղանին են եղել նախորդ բացատրական բառարանները, որոնց դրական ու բացասական կողմերը շեր կարող հաշվի չառնել: Բառարանի հեղինակը լուրջ ուշադրություն է դարձրել արդի հայերենի բառազանձի նորմավորմանը՝ նշելով տվյալ բառաձևի սխալ, հնացած, բարբառային լինելու, այս կամ այն մասնագիտությունը վերաբերելու մասին: Հաճախ նա ճշգրտում է նախորդ բառարանների այս կամ այն բառին տրված բացատրությունը և կամ լրացուցիչ բացատրություններ տալիս, նշում լրացուցիչ կիրառությունները: Օրինակ՝ ժՀՔԲ-ում ապառքանել բառի բացատրության մեջ նշված է երկու իմաստ, նորում՝ հինգ, անբաժին բառի դիմաց այնտեղ նշված է մեկ իմաստ, նորում՝ չորս, ժՀՔԲ-ում ապառք բառի դիմաց գրված է՝ «հարկի թերառք, հարկի ժամանակին չվճարված մասը», իսկ նորում այս բացատրության ավելացրած է՝ «շմուծված և վճարողի վրա որպես պարտք մնացած գումար», որը կարևոր է, որովհետև շմուծված գումարը կարող է զիջված լինել և պարտք (ապառք) չհամարվել: Կարևոր են նաև ֆին. իրավ. նշումները, որոնք չկան նախորդում: ԺՀՔԲ-ում ապառքակալում բառի դիմաց գրված է՝ «տրակավորումից, պրոֆեսիոնալ գիտելիքներից ու փորձից զրկվելը», իսկ նորում գրված է՝ «տրակավորման աստիճանից, կոշումից զրկելը», որն ավելի ճիշտ է: Այսպիսի ճշգրտումներ շատ կան բառարանում:

ԺՀՔԲ-ում գրեթե բոլոր բառերի համար բերված են հեղինակային բնագրեր, որոնք մասսայական ընթերցանության առումով երբեմն ավելորդ են և իզուր տեղ ու ժամանակ են խլում: Ի՞նչ կարիք կա, օրինակ, գեղի, բոնել, բարի, բարկանալ, բարդ կամ գեղե, զինվոր և այլ ամենուր գործածական բառերի համար դիմել հեղինակային բնագրի և այն էլ երբեմն երկար բնագրերի: Գրախոսվող բառարանի հեղինակը ճիշտ է վարվել՝ հիմնական տեղը հատկացնելով բացատրություններին և միայն առանձին դեպքերում դիմելով բնագրերի օգնությանը:

Ավարտելով մեր խոսքը հավաստենք, որ պրոֆ. էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը» խոշոր նվաճում է հայ բառարանագրության մեջ, մի արժեքավոր նվեր հայերենով գրող և խոսող գրագետներին: Միայն պիտի ցավել, որ այդքան արժեքավոր բառարանը հրատարակչության մեղքով ունի նկատված վրիպակների մեծ ցանկ:

ՍԻՐԱՔ ԳՅՈՒԼՐՈՒԴԱՂՅԱՆ  
Բաճախական գիտությունների  
դպրատն  
ՍԵՐԳԵՅ ԳԱՍՏՅԱՆ  
Բաճախական գիտությունների  
թեկնածու